ԵՎՊԱՏՈՐԻԱՅԻ ՍԲ. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

ՅՈՒԼԻ ԹԱՄԱՆՅԱՆ

Ղրիմի թերակղզու արևմտյան մասում գտնվող Եվպատորիա քաղաքը իր գոյության 2500 տարվա ընթացքում բազմիցս ավերվել և նորից վերականգնվել է։ Նրա անվանափոխումները՝ Կերկինիդա, Կեռզև և վերջապես Եվպատորիա, այդ վերափոխությունների լավագույն ապացույցն են։

Հին քաղաքներից շատ քչերին է վիճակվել անաղարտ պահպանել ստեղծված ճարտարապետական ընդհանուր ուրվագիծը։ Եվպատորիայում պահպանվել են բավական թվով պատմական կառույցներ, հին շենքերի մնացորդներ, ծուռումուռ փողոցներ և ընդհանուր առմամբ պատմական միջավայր։ Հին կառույցների մեջ նշանավոր է 1552 թ. հայազգի նշանավոր ճարտարապետ Սինանի կառուցած Ջումա—Ջամի մզկիթը[1]։ Պահպանվել են նաև մի շարք այլ հուշարձաններ, որոնցից հատկանշելի է սբ. Նիկողայոս հայկական եկեղեցին[2]։ Այն գտնվում է քաղաքի կենտրոնական թաղամասում (Ինտերնացիոնալնայա փողոց, № 44, այժմյան ծերանոցի բակում)։

Եկեղեցին գմբեթավոր բազիլիկա է (նկ. 1), ուր ամբողջ ծավալները ավարտվում են ութնիստ թմբուկով։ Գմբեթակիր չորս կամարները հենվում են չորս կլոր սյուներին և փոքր գոտկող կամարների միջոցով (որոնք հենվում են պատերին կից որմնամույթերի վրա) բեռը փոխանցում պատերին։ Գմբեթի հիմքը ստացվում է գմբեթակիր կամարների անկյուններում տեղադրված չորս առագաստների միջոցով։ Առագաստների՝ վրա ժամանակին եղել են փորագրված վարդյակներ՝ օվալ շրջանակների մեջ, որոնցից, սակայն, պահպանվել են միայն երկուսը (հիշենք Մոմիկի կառուցած Արենիի եկեղեցու առագաստները)։ Գմբեթակիր չորս սյուները կլոր են, հարթ սվաղված, առանց բարակեցման։ Խոյակները և խարիսխները իրենց տրամատով հիշեցնում են անտիկ ճարտարապետության տարրերը։ Գմբեթակիր կամարները իրար միացած են մետաղե ձգաններով, որոնք մասամբ մարում են առաջացած հրող ուժերը։ Բազիլիկայի փոքր նավերը ծածկված են գլանաձև թաղերով գոտկող կամարների վրա։ Ներսում կառույցի պատերը սվաղված են եղել, սակայն որմնանկարների հետքեր չեն պահպանվել։ Ավագ խորանի երկու կողմերում տեղադրված են երկհարկանի ավանդատները, որոնց երկրորդ հարկ տանող փայտյա աստիճանները սկսվում են կենտրոնական նավի և ավագ խորանի միջև գտնվող ուղղանկյուն հատվածից։ Երկրորդ հարկի ավանդատները լայն բացվածքով միացած են եղել եկեղեցու ընդհանուր դահլիճին, սակայն վերակառուցումների ժամանակ հարավային ավանդատան բացվածքը փակվել է։ Առաջին հարկի ավանդատների մուտքը եկեղեցու ընդհանուր դահլիճից է, և դրանք այժմ օգտագործվում են որպես պահեստներ։

Աբսիդի ծավալը շենքի ընդհանուր ծավալից դուրս է դրված, սակայն կենտրոնական նավի շարունակությունը կազմող ուղղանկյուն հատվածը զբաղեցնում է նաև աբսիդի մի մասը, որի հետևանքով աբսիդը ներսից դարձել է ոչ լրիվ կիսաշրջան (նկ. 1)։

Եկեղեցին բավական մեծ շենք է, որի ճակատները լուծված են համաչափ։ Բացվածքների դասավորությունը որոշակի ռիթմ է հաղորդում ամբողջ կա-

---

[1] В. Драчук, Я. Кара, Ю. Чалышев, Керкинда-Гезлев, Евпатория-Симферополь, 1977, с. 66; «Հայկական սովետական հանրագիտարան», հ 10, էջ 386։

[2] Վ. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, 1801—1917, Երևան, 1970, էջ 456։

ռուցվածքին։ Ներքևի շարքի լուսամուտները ուղղանկյուն են և ունեն երեսակայներ, որոնք բարավորից վեր ավարտվում են սլաքաձև պսակով (նկ. 2)։ Ուղղանկյուն լուսամուտների վրա տեղադրված են կլոր լուսամուտներ դարձյալ երեսակալներով։ Հյուսիսային ու հարավային ճակատների արևելյան մասի վերջին ուղղանկյուն լուսամուտների վրա կլոր լուսամուտներ չեն տեղադրված։ Ուղղանկյուն պատուհանների պսակները նմանություն ունեն Ղրիմի ավելի վաղ կառուցված հայկական հուշարձանների նմանօրինակ տարրերի հետ։ Օրինակ՝ Թեոդոսիայի Հովհաննես Աստվածաբանի և Հրեշտակապետաց եկեղեցիների շքամուտքերը։ Արևելյան ճակատի վրա տեղադրված է մեկ լուսամուտ, որի վերևի մասում պահպանվել է պատի մեջ ագուցված մի փոքր խաչքար (նկ. 3)։ Արևմտյան ճակատի վրա տեղադրված լուսամուտները հիմ-



Նկ. 1. Եվպատորիայի սբ. Նիկողայոս եկեղեցու հատակագիծը
(չափագրությունը՝ Ցու. Թամանյանի)

նականում նույնատիպ են, միայն առանձնանում է համարյա քիվի տակ տեղադրված պատուհանը՝ կիսակլոր պսակով։ Լուսամուտը վերցրած է ուղղանկյուն շրջանակի մեջ և տեղադրված է պատի հարթությունից ներս։

Եկեղեցին ունի երեք մուտք՝ հարավից, հյուսիսից և արևմուտքից։ Հյուսիսային և արևմտյան պատին պահպանվել են շաղախի և պահունակների հետքեր, որոնք, հավանական է, կից կառուցված նախամուտքի կամ նախասրահի մնացորդներ են։ Շատ հնարավոր է, որ թմբուկի յուրաքանչյուր նիստի վրա (կամ միայն 4 նիստերի) բացված լինեին լուսամուտներ։ Մեծ հետաքրքրու-

թյուն են ներկայացնում մուտքերի վրա բացված լյունետները։ Այդ ձևը մեր պատմական ճարտարապետության մեջ կիրառվել է դեռ վաղ միջնադարում (Ավանի տաճար)։ Հատկանշական է, որ հեղինակը նորից է անդրադարձել լյունետի օգտագործմանը, դրանով հեռավոր կապ ստեղծելով վաղ հայկական ճարտարապետության հետ։ Արևմտյան մուտքի լյունետի մեջ արված է ուղ-



Նկ. 2. Եկեղեցու հյուսիսային ճակատը



Նկ. 3. Եկեղեցու արևելյան ճակատը

ղանկյուն խորշ, որը, ըստ երևույթին, նախապատրաստված է շինարարական արձանագրության տեղադրման համար։ Հավանական է, որ սվաղի շերտի տակ պահպանված լինի այդ արձանագրությունը։

Շքամուտքերի ճարտարապետական մշակման մեջ նկատելի են անտիկ ճարտարապետությունից փոխառնված ձևեր՝ տրիգլիֆներ։ Հայկական ճարտարապետության համար անսովոր է բարավորների փականի քարի շեշտումը, որը այս կառույցում տեղ է գտել մուտքերի ձևավորման մեջ։ Փականի քարը մի փոքր կախ է տեղադրված և ունի կիսակլոր ելուն։ Շենքի վրա բացակայում են վիմագրությունները, որոնք դժվարացնում են կառուցման ժամանակի որոշման հարցը։ Եկեղեցու շինարարությունը, հավանաբար, ավարտվել է XIX դ. կեսերին[3]։ Ըստ պահպանված տեղեկության, Եվպատորիայի ս. Նիկողայոս եկեղեցու եկամուտները 1831—1842 թթ. կազմել են 18075 ռ. 68 կ., իսկ ծախսերը՝ 16.052 ռ. 59 կոպեկ[4]։ Վ. Միքայելյանը նշում է, որ «Եվպատորիայի ս. Նիկողայոս եկեղեցու եկամուտներն ու ծախսերը շատ են, որովհետև եկեղեցու շինարարությունը, որը տարիներով ձգձգվում էր, մեծ գումարներ էր պահանջում»[5]։

Կառույցը կանոնավոր սրբատաշ, սպիտակավուն, տրախիտ հիշեցնող քարից է, որը շատ տարածված է Ղրիմի թերակղզում։ Պսակող քիվը ունի բավական բարդ տրամատ, ուր երկու շարք իրար վրա տեղադրված ատամիկների արանքում տեղավորված են կիսագլանաձև գոտիներ։ Արևմտյան ճակատում քիվը ընդհատվում է, և կենտրոնական մասը մի փոքր բարձրանում։ Այդ մասում նկատվում են տանիքի արմատական փոփոխություններ։ Թմբուկի քանդվելուց հետո արվել է նոր տանիք, որը արևելյան մասում իշեցված է, իսկ արևելյան աբսիդան ծածկված է առանձին ծածկով։ Բուն տանիքի կառուցվածքը պարզելու համար պետք է կատարել մաքրման աշխատանքներ։

Եկեղեցու հյուսիս-արևմտյան անկյունը ժամանակին վերափոխվել է։ Կառուցվել է կոնտրֆորս։ Արևմտյան մուտքի մոտ պահպանվել է մի խարիսխի մնացորդ՝ անտիկ ճարտարապետությունը հիշեցնող տրամատով։

Պատմական կառույցի տեխնիկական վիճակը առանձնակի վտանգ չի հարուցում, միայն հարավ-արևմտյան անկյան տակ գոյացել է բավական խորը խորշ, որը շենքին կարող է վնաս հասցնել։

АРМЯНСКАЯ ЦЕРКОВЬ СВ. НИКОЛАЯ В ЕВПАТОРИИ

ЮЛИЙ ТАМАНЯН

Резюме

Отсутствие каких-либо надписей на армянской церкви св. Николая в Евпатории затрудняет ее датировку. Ориентировочно завершение строительства этого памятника можно отнести к середине XIX в.

План здания выполнен в традиционных формах исторической армянской архитектуры. Это купольная базилика с восьмигранным барабаном, который полностью разрушен. В кладку стены у восточного окна вделан скромный по размерам хачкар. Три входа в церковь были обрамлены портиками, остатки которых не сохранились. Наличие люнетов над входами также свидетельствует о преемственной связи с исторической армянской архитектурой.

---

3 Վ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 310։

4 Նույն տեղում, էջ 151։

5 Նույն տեղում։